ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» Հունվարի 2024թ. N ՄՈ/48-Ա

ք. Արմավիր

«ԱՐԱՔՍԻ Զ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 160-րդ, 164-րդ և 167-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի հունվարի 25-ի ՆՄՈ/42-Ա որոշումը և Կարինե Բարսեղյանի 2024 թվականի հունվարի 26-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Բարսեղյանին տրամադրել 2021-2022 թվականների չօգտագործած ամենամյա հերթական երկարացված արձակուրդը՝ 2024 թվականի ապրիլի 3-ից մայիսի 8-ը ներառյալ՝ 25 աշխատանքային և 1 հիշատակի օր տևողությամբ:
2. Կարինե Բարսեղյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Հասմիկ Ավետիսյանին:
3. «Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հասմիկ Ավետիսյանի աշխատավարձի վճարումն 2024 թվականի ապրիլի 2-ից մայիսի 8-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Կարինե Բարսեղյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի մայիսի 10-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024.01.29 17:28:03 GMT+4
Հաստատված է EKENG-ի կողմից

eID

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**